առաջարկ

https://newalliance.earth

Այս դարի ընթացքում աշխարհի բնակչությունը կաճի մինչև տասը միլիարդի՝ հասնելով ամենաբարձր թվին: Դրանից հետո ժողովրդագրական փոփոխություններ են սպասվում, բնակչությունը կա՛մ կկայունանա, կա՛մ կնվազի: Սրա մասին է վկայում աշխարհի շատ երկրներում ծնելիության նվազումը:

Ուստի մեր նպատակը պետք է լինի ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն **երջանիկ կյանքը՝ 10 միլիարդ մարդու համար**: Երջանիկ կյանք նշանակում է, որ հիմնական կարիքները բավարարված են, և որ կան բավարար ռեսուրսներ անհատական ներուժի և տաղանդների իրացման համար:

Սահմանափակումներ և մարտահրավերներ

Որպեսզի սահմանենք կենսաձև բոլոր տաս միլիոնի համար հետևյալ ասպեկտները պիտի հաշվի առնենք.

- Էկոլոգիական սահմանափակություն
- Անձնական Տնտեսական սահմանափակություն
- Զարգացում և սոցիալական կոմֆորտ

Էկոլոգիական սահմանափակում

Վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ մեր ներկայիս կենսակերպը գերազանցում է մոլորակի էկոլոգիական հնարավորությունները՝ վնասների առնվազն հինգ կատեգորիաներով (ըստ Ստոկհոլմի ճկունության կենտրոնի):



Կետավոր գիծը ներկայացնում է մոլորակի էկոլոգիական սահմանները: Առավել կրիտիկական կատեգորիաներ են կլիմայի փոփոխությունը և տեսակների կորուստը:

Տիպիկ «արևմտյան» կենսակերպն այսպիսով անհասանելի է, անգամ ինդուստրիալիզացիայի նախկին կենտրոններում: Այն համընդհանուր կիրառելիություն չունի: Տեխնոլոգիական նորարարությունը միայն բավարար չէ և ուշ է տեղ հասնելու: Մենք պետք է փնտրենք ավելի խելացի համակարգեր: Էկոլոգիայի և արդարության նպատակներից ելնելով՝ տիպիկ կենսակերպի մենյուն կունենա հետևյալ տեսքը (որպես օրինակ վերցնենք Շվեցարիան).

- 20 մ² անձնական կյանքի տարածք,
- 2.5 մ² կոմունալ տարածք (1250 մ² ՝ միկրոկենտրոնում, տե՛ս ստորև)
- Ոչ մի ավտոմեքենա
- Ոչ մի թռիչքներ
- 6 կմ/օրական երթևեկություն գնացքով (այսօր՝ 6 կմ Շվեցարիայում)
- 1000 կմ/տարեկան նավարկություն
- 15 կգ միս տարեկան (4.3 կգ տավարի միս, 7.6 կգ խոզի միս, 3.2 կգ այսօր 120 ԱՄՆ-ում, 50՝ Շվեյցարիայում)
- 20 լիտր կաթ տարեկան (այսօր 370լ՝ Շվեյցարիայում)
- 70 լիտր ջուր օրեկան
- 3 ժամ ինտերնետի սպառում շաբաթական (այսօր՝ 7)
- 1 օրաթերթ օրական 50 բնակչի համար

Տարբեր ֆակտորները կարող են մասամբ փոխարինել իրար, օր.՝ կեր պակաս միս, բայց շատ մեքենայով տեղաշարժվիր, փոքրացրու ապրելու տեղդ՝ կարճ թռիչքի խաթր և այլն: Ամբողջապես այս սահմանափակումները պահանջում են լրիվ այլ կենսակերպ, որի համար անհրաժեշտ է մի այլ կեցության, տարածքային և ինստիտուցիոնալ պայմաններ: Թեև գոյություն ունեցող արևմտյան մասսայական կոնսումերիզմը ակնհայտորեն չի կարող անվերջ ձգել, բոլոր 10 միլիարդ մարդկանց համար հաճելի կենսակերպ ապահովելը ոչ միայն հնարավոր է, այլև մեծ առաջընթաց կլինի երկրի բնակչության մեծամասնության համար: Ամենից կարևորը, կան բավարար ռեսուրսներ, որպեսզի խուսափենք հոգնեցուցիչ աշխատանքից, պահպանենք կամ կառուցենք գործող առողջապահական համակարգ և շարունակենք գիտական և տեխնոլոգիական առաջընթացը:

Տնտեսական սահմանափակումներ

Ներկա տնտեսական համակարգը գտնվում է պերմանենտ ճգնաժամում: Դա կարելի է ցույց տալ հետևյալ թվային տվյալներով. Մոլորակի պարտքը 226 տրիլիոն դոլար է, այսինքն՝ մոլորակի 70 տրիլիոն ՀՆԱ-ի 300 տոկոսի չափով (ինչը Հունաստանի պարտք/ՀՆԱ հարաբերակցությունից ավելի է համարյա երկու անգամ), ֆինանսական ածանցյալ գործարքների փուչիկը հասել է վեց հարյուր տրիլիոնի:

Աճը ներկա տնտեսական համակարգի համակարգային անհրաժեշտությունն է, բայց լոճում է մոլորակի էկոլոգիական հնարավորությունները: Կայուն տնտեսությունը չի կարող հիմնված լինել աճի վրա: Դրա մատերիական/ֆիզիկական ազդեցությունը պետք է մաշվի, և մաշվի արագ:

Թվայնացումը և ավտոմատակցումը կկրճատեն վճարովի աշխատանքները ներկայիս մակարդակից մինչև 50 տոկոսով: Դա լավ նորություն կլիներ, եթե մեր եկամուտը կախված չլիներ աշխատանքներից: Երբ արտադրության ծախսը մոտենում է զրոյականի, դա նշանակում է գին-աշխատավարձ հարաբերությամբ գործող շուկայական տնտեսության կոլապս: Կարևոր, բայց չվճարով աշխատանքը (աշխատանքի 60 տոկոսը, հիմնականում տան գործեր, գյուղատնտեսություն և խնամք) պետք է արտահայտվի ճիշտ սոցիալական ձևով, որպեսզի օգտակար լինի նրանց, ովքեր անում են այդ աշխատանքը:

Անհավասարությունն աճում է ամբողջ աշխարհում և ժողովրդավարության համար լուրջ ռիսկեր է ստեղծում: Կենտրոնական բանկերի Quantitative easing և փողի էժանացումն է պահում անկայուն հավասարակշռությունը:

Կա՞ արդյոք Պլան Բ, երբ փուչիկը վերջապես կպայթի

Իսկապես գործուն տնտեսությունը սահմանվում է էկոլոգիական և սոցիալական նպատակներով, հիմնված է ընդհանուր ռեսուրսների և ընդհանուր կարիքների վրա: Այն ապահովում է, որ բոլորն օգտվեն տեխնոլոգիական առաջընթացից: Այն սահմանվում է իր՝ գործող տարածական մոդուլներով կազմակերպված մասնակիցների ժողովրդավարական կամքով: Ռացիոնալ տնային տնտեսությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Ամեն մարդ ներդնում է այն, ինչ կարող է, ամեն մարդ ստանում է այն ինչի կարիք ունի
- Կիսվել և բաժանել առևտուր և մարկետինգ անելու փոխարեն
- Համագործակցել՝ մրցակցելու փոխարեն:

Այսպիսի տնտեսությունը պահանջում է նոր ձևի և տիպի կանոներ:

Ինքնակառավարվող կանոնակարգը(ժողովրդավարությունը) կարող է աշխատել համաձայն հետևյալ կանոնների (Էլինոր Օստրոմ):

1. Սահմանել խմբի հստակ սահմանները
2. Ընդհանուր սովորական ապրանքների կառավարման կանոնները համապատասխանեցնել լոկալ կարիքներին և պայմաններին
3. Ապահովեք, որ նրանք, ում վրա ազդում են կանոնները, կարողանան մասնակցել կանոնները փոփոխելուն
4. Ապահովել, որ համայնքի անդամների ստեղծած կանոները հարգվում են համայնքից դուրս գոյություն ունեցող իշխանությունների կողմից
5. Կառուցել համայնքի մասնակիցների կողմից իրականացվող համակարգ՝ մասնակիցների վարքը մշտադիտարկելու համար
6. Կիրառել սանդղակային պատժամիջոցներ կանոնները խախտողների նկատմամբ
7. Տրամադրել հասանելի, էժան միջոցներ կոնֆլիտները լուծելու համար
8. Ստեղծել պատասխանատվություն՝ կառավարելու ընդհանուր ռեսուրսը՝ ներդրված շերտերում ամենացածր մակարդակից մինչև ամբողջ փոխկապակցված համակարգը

Այս հիմնարար կանոնները կիրառվում են բոլոր մոդուլների բոլոր ինստիտուտ-ներում։ Ռացիոնալ տնային տնտեսությունում կարելի է առանձնացնել երեք հիմնական տիրույթներ.

- Ամենօրյա տնային (թաղ, գլոմո1) մինիմալ տնտեսություն, որտեղ չվճարվող աշխատանքը ամենատարածվածն է։
- Հավելյալ հանրային ծառայություններ և արտադրություններ, որոնք արվում են ավելի մեծ մասշտաբով քաղաքացիների կամքով և համագործակցությամբ։ Այս ծառայությունները ռացիոնալ կերպով պլանավորվում են ըստ ռեսուսրների և կարիքների տարածքային սահմանների ներսում և կառավարվում են այդ տարածքի ինստիտուտների կողմից։
- Անձնական և կոլեկտիվ ոչ անհրաժեշտ գործավարությունների տիրույթ, ֆերմաներ, կոոպերատիվների, համագործակցություններ, որոնք չեն գործում ըստ ֆիքսված պլանի բայց կարգավորվում են էկոլոգիական և սոցիալական օրենքներով։

Անձնական աճ և սոցիալական ներգրավածություն

Ըստ վերջին հետազոտությունների՝ ներկա ապրելակերպի շատ կողմեր մեզ դժբախտ են դարձնում։ Աղքատությունն է մեզ դժբախտ դարձնում, աշխատանքի վայրում շարունակական սթրեսը։ Անհավասարության բարձր մակարդակի հետ է կապված բռնության աճը և վատ առողջությանը։ Ամենահավասար հասարակու-թյունները նաև ամենաերջանիկներն են (Դանիա)։

Արդյունաբերական տնտեսության զարգացումը վերջ է տվել ճնշող ընտանե-կան կառուցվածքներին և ավանդական համայնքավարություններին։ Մյուս կողմից, ֆենոմեններ ինչպիսիք են անցանկալի մենությունը, սոցիալական իզոլացիան, չտարբերվելը մտահոգիչ են։ Շատ մարդիկ տառապում են իրական կապվածու-թյունների և աջակցության բացակայությունից։

Նույնիսկ երբ հիմնական կարիքները բավարարված են, իսկական անձնական զարգացման, մասնակցության և էներգիա ստանալու դեֆիցիտ է աշխատանքի վայրում և տանը։

Մեզ պետք են կյանքի նոր ձևեր, որտեղ բոլոր տարիքի մարդիկ իրենց զգում են համայնքում ինտեգրված և մասնակից, սոցիալական ճանաչում և ապահով սոցիալական դիրք են վայելում։ Որպեսզի առողջ մեծանան և դառնան երջանիկ մեծահասակներ երեխաներին պետք է մտերմիկ և ապահով միջավայր։ Անձնական տարածք ունենալը, սոցիալական մասնակցությունը և անձնական զարգացումը պետք է իրար հակասող բաներ չլինեն։

Այս կյանքի նոր ձևերին հասնելու համար պետք է որ տնային կյանքի բազմա-թիվ տեսակներ հասանելի լինեն՝ միայնակների, զույգերի, ընտանիքների և հա-մայնքների համար և դրանք կարելի լինի ադապտացնել փոփոխվող անձնական պայմաններին, որպեսզի ոչ ոք հարկադրված չլինի հեռանալ թաղից կամ կորցնի ընկերներին։

Եվ ամենից բարձր. ժողովրդավարությունը բոլորին է երջանիկ դարձնում։

5 համընդհանուր, գործողունակ տարածքային մոդուլներ (գլոմո)

Որպեսզի դիմադրենք ներկա էկոլոգիական, տնտեսական և հոգեկան-սոցիալական մարտահրավիրներին, մենք առաջարկում ենք երկիր մոլորակի 3.5 միլիարդ տնային տնտեսությունները կազմակերպել հետևյալ հինգ մոդուլների միջոցով.

1. 16 միլիոնանոց թաղ՝ գլոմո 1
2. 400 000-անոց թաղամաս և ավաններ, գլոմո 2
3. 4000 մեծ քաղաքներ և ռեգիոններ, գլոմո 3
4. 800 տարածաշրջաններ գլոմո 4
5. 1 մոլորակ գլոմո 5

Կազմակերպման համեմատելի ձևերը և չափերը կարևոր են համաշխարհային հավասարության և արդար փոխանակման համար։ Համաշխարհային տնային տնտեսությունը պահանջում է ունիվերսալ մոդելներ՝ հստակ սահմաններով և կանոներով։

Մոդելները պարզապես կիրառական են, և կոնկրետ կենսակերպի կամ մշակութային ինքնության տարբերակում չունեն։ Նրանք կազմում են սուբսիդիարության ոլորտներ, այն է՝ ավելի մեծ մոդելները խառնվում են, երբ որ փոքրները նեղն են ընկում։ Ցանկացած գործառույթ պետք է կատարվի ամենաստորին կամ խնդիրին ամենամոտ մակարդակում (վերատեղայնացում)։ Ինքնավար գործող թվային սերվերները և ցանցերը կարող են օգտակար լինել։

1. Տնտեսապես և սոցիալապես ինտեգրացված թաղ

հետևյալ հատկություններն են բնորոշ.

- Կենցաղը ըստ Մոլորակի թույլատրելի սահմանները, տես ստորև
- 500 մարդ, մոտավոր դեմոգրաֆիական խառը
- Դեմոգրաֆիականորեն կառուցված՝ կոոպերատիվ, ասոցիացիա
- Կոմպակտ շինությունները՝ քաղաքային կոտնեքստում (կարճ հեռավորություններ)
- Կապ մոտակա գյուղատնտեսական հիմքերին՝ 60-ից 80 հա
- Ներքին տնային տնտեսություն և խնամքի տնտություն
- Միկրոկենտրոն
- Կացարանի լայն ընտրություն. Մի սենյականոց, բազմասենյականոց և առանձնատուն; առանձնության հարգանք

Թաղի անդամները կազմում են կոլեկտիվ կենցաղային տնտեսություն, որը լրացնում է առանձին տնտեսություններին՝ ապահովելով հիմնական կարիքները։



Սա քաղաքային թաղամասի գծանկարն է (գլոմո 1) ավանդական եվրոպական քաղաքում

62 հա գյուղատնտեսական նշանակության հողը բավարար է հիմնական սննդային պահանջները բավարարելու համար, եթե նորմալ կլիմայական պայմաններում է (Կենտրոնական եվրոպա, ԱՄՆ, Չինաստան, Ճապոնիա և այլն): Հիմնականում գյուղատնտեսական հողը քաղաքային թաղից գտնվում է 20-50 կմ հեռավորության վրա: Փոքր բեռնատարը բավարար է թաղին ուտելիք մատակարարելու համար: Համագործակցությունը, հարևան թաղերի միջև փոխանակումն ու կիսվելը խրախուսվում է: Հողի և ուտելիքի հասանելիությունը թաղամասի ինքնավարության անհրաժեշտ պայմանն է և նաև կյանքի որակի պայման (ուտելիքի որակի, բնությաան մեջ հանգստանալու, ֆերմերային աշխատանքին և ուտելիքի ստեղծմանը մասնակցելու):

Օրինակ՝ ահա ուտելիքի տեսակներ և քանակներ, ու անհրաժեշտ մակերեսները:

արտադրանք	**մշակված**	**մարդ/շաբաթ**	**500 մարդ/ շաբաթ**	**մեկ տարում**	**մակերես**	**արոտավայր**
բանջարեղեն		3 կգ	1500 կգ	75 տ	4 հա	
կարտոֆիլ		0.8 կգ	400 կգ	20 տ	2 հա	
հացահատիկներ	Ալյուր, փաթիլներ, ձավարեղեն, մակարոնեղեն	1 կգ հաց = 700 կգ ալյուր	350 կգ 50 կգ 50 կգ 150 կգ	35 տ	10 հա	
լոբազգիներ, սոյա, ոսպ	տոֆու		20 կգ	1 տ	1 հա	
Դդմի, կտավատի, արևաածաղկի սերմի ձեթ	միջուկի յուղ		20 կգ 20 լ	1 տ 1000 լ	2 հա	
մրգեր, հատապտուղներ	հյութ, ջեմ, կոմպոտ, չիր	1.5 կգ	750 կգ	39 տ	2 հա	
կաթ	 յոգուրտ, պանիր, կարագ	0.5լ = 0.5լ 0.5կգ = 0.5լ 0.3կգ = 3լ 0.1կգ = 3լ	250 լ 250 լ 1500 լ 1500 լ	30-40 կովեր 182.000 լ	10 հա	15 հա
ձու		2-3	1250	65.000 260 հավեր	2 հա	
միս	տավարի, հորթի, խոզի, ոչխարի միս, նրբերշիկեղեն	0.3 կգ	150 կգ	7.5 15 կգ մարդ/տարի	արոտավայր,խոշոր եղջերավոր անասուններ 3հա, լոբազգիներ խոզերի համար 1հա	9 հա 1 հա
ընդհանուր					**37 հա**	**62 հա**
կենդանի					16 հա	41 հա
բույս					21 հա	21 հա

Եթե յուրաքանչյուր մարդու հաշվարկով տարեկան ընդամենը 7.5 կգ միս սպառվի, անհրաժեշտ տարածքի չափը կկրճատվի մինչև 56 հա-ի: Մսի արտադրությունը մասամբ կապված է նաև կաթնամթերքի արտադրության հետ: Կաթնամթերքի քանակը, որ ցուցադրված է այս աղյուսակում՝ ստորև, չի համապատասխանում էկոլոգիական մենյուի օրինակին՝ վերևում:



Քաղաքային թաղի **միկրոկենտրոնը** կապված է գյուղատնտեսական կենտրոնի (ֆերմայի կամ ֆերմաների ցանցի հետ) տվյալ շրջանում։ Միկրոկենտրոնը խառը օգտագործման տարածք է (ցանկալի է՝ առաջին հարկում) որը օպտիմիզացնում է տնային աշխատանքը, կրճատում է հեռավորությունները (80մ = 1 րոպե), թույլ է տալիս համատեղումներ և ծառայում է միևնույն ժամանակ որպես ամենօրյա հաղորդակցման, սոցիալական հավաքույթների, ուրախության ու խաղերի վայր։

Ըստ տեղական պայմանների և մասնակիցների ցանկությունների այն կարող է ծածկել 1200-ից 2000 քմ տարածք։ Այն կազմակերպվում է բնակիչների կազմակերպմամբ (համաձայն վարման կենցեպտի)։

Ահա պատկերային սխեման.



Շվեցիարիայում տարեկան կատավրում է 7,9 միլիոն ժամ վճարվող և 9 միլիոն չվճարվող աշխատանք՝ հիմնականում տնային և հոգատարության գործեր։ Եթե հաշվենք միջին կյանքի տեվողության՝ ներառյալ քնելու համաձայն, վճարվող աշխատանքը կազմում է ոչ ավել քան 12%-ը։

Այժմ վճարվող աշխատանքը կազմում է 22 ժամ/մարդա/շաբաթ, չվճարվող աշխատնաքը՝ 24 ժամ, միասին 46 ժամ, իսկ երեխաներ ունեցող տնային տնտեսու-թյուններում՝ 65 ժամ։

Գլոմո-թաղերում վճարվող աշխատանքը կազմում է 14.5 ժամ, չվճարվողը՝ 24 (ներառյալ գյուղատնտեսական գործերը), ընդհանուր առմամբ՝ 38.5 ժամ, 44.3՝ երեխաների հետ։

Այսպես սահմանված թաղերը (glomo1)

- առաջարկում են 4-աստղանի հյուրանոցի կոմֆմորտ
- Կարող են կարիքները հոգալ ճկուն՝ կիսվելով ապրանքներով, հատկապես ուտելիքով
- Կարող են կրճատել մասնավոր կեցության տարածքը՝ կոմունալ տարածքների օգտագործմամբ, ինչը առանցքային էկոլոգիական անհրաժեշտություն է
- Իր չափերի շնորհիվ կարող է վերաբաշխել տնային գործերը ճկունորեն և համաձայն բոլորի ցանկության
- Հարմարված են ծնողների և երեխաների համար
- Կարող են իրենց տրամադրության տակ ունենալ քիչ թվով տրանսպորտային միջոցները՝ հեծանիվ, ավտոմեքենա, փոքր ավտոբուսներ
- Քո տեղը ունենալու զգացողություն են տալիս և պայմաններ են ստեղծում անձնական ինքնառեալիզացման համար

- ընդլայնում է իր անդամների հզորացումը և ժողովրդավարական մասնակցությունը
- իդեալական վայր է սոցիալական խաղերի և ինքնաբուխ երեկույթների համար
- ապահովում է բնակության վայրերի լայն տարբերակներ և տարածքի բաշխման ճկունություն
- բաց է այցելուների համար (20 հյուրասենյակ)
- կազմակերպում է գյուղատնտեսության արդար և էկոլոգիական ձև (առանց սննդի վատնման)
- խիտ, բազմազան և հաճելի քաղաքների ստանալու առաջին մոդուլն է, կա մեկ միկրոկենտրոն ամեն 100 մետր մեկ
- երաշխավորում է նյութական հիմնարար ինքնիշխանություն և կայուն հիմք՝ «ներքևից վերև» ժողովրդավարության համար

2. Թաղամասերը և փոքր քաղաքները որպես հանրային ծառայությունների հիմնական կոմունաներ (glomo2)

40 թաղամասերը, կամ 20.000 մարդ, կազմում են քաղաքային թաղամաս, կամ երկրում՝ փոքր քաղաքային քաղաք, որպես հիմնական կոմունա մի շարք հանրային ծառայությունների համար.

- տարրական և միջնակարգ դպրոցներ
- պետական և անվտանգության ծառայություններ՝ ոստիկանություն, շրջանային դատարան, սոցիալական աջակցություն
- վարչակազմ և քաղաքական մարմիններ (քաղաքային խորհուրդ)
- Առողջության կենտրոն
- ջուր
- էներգիա
- հասարակական տրանսպորտ
- Կոյուղի, աղբի վերամշակում, նյութերի կառավարում
- ABC քաղաքացիական կենտրոն (դահլիճ, գրադարան, հյուրանոց, կինո, քոլեջ և այլն)
- globex սննդի պահեստ՝ ամբողջ աշխարհից եկող լրացուցիչ ապրանքների համար (արդար առևտուր)
- կոոպերատիվ շուկա փոքր արդյունաբերության և արտադրամասերի համար (տեքստիլ, փայտ, մետաղ, մեքենաներ, էլեկտրական, էլեկտրոնիկա, կաշի և այլն)

Մեծ քաղաքներում այդ ծառայությունների մեծ մասը կկազմակերպվեն համաքաղաքային գործակալությունների կողմից, մինչդեռ թաղերի դերը կկրճատվի հատուկ և խորհրդատվական գործառույթների:

Այս հանրային գործառույթների շուրջ կարող են զարգանալ տարբեր մասնավոր կամ կոոպերատիվ ձեռնարկություններ՝ սիգարների խանութներ, գլխարկագործներ, փոքր ռեստորաններ, ոսկերիչներ, իրավաբաններ և այլն:

Թաղամասը կամ փոքր քաղաքը լավագույնս աշխատում է, եթե վերը նշված ծառայությունները գործում են փոքր, կենտրոնական հրապարակի շուրջ (40x40մ). Թաղերը/փոքր քաղաքները կենցաղային տարածքներ են, որտեղ կենսական գործառույթների մեծ մասը կարելի է հասնել ոտքով 10 րոպեի ընթացքում:



Սա հիմնական կոմունայի սխեմատիկ պատկերն է, որը կարող է լինել կամ քաղաքային թաղամաս, կամ փոքր քաղաք:

Սա հնարավոր ABC-ի պատկերն է, հետևի «համաշխարհային պատը» կարելի է առցանց կապել մոլորակի մյուս 399’999 համաշխարհային պատերի հետ

3.Ռեգիոններ և մեծ քաղաքներ (գլոմո 3)

Մեծ քաղաքներում միասին ապրելն ու աշխատելը կազմում են այս մոլորակի վրա կայուն և հաճելի ապրելակերպի հիմքը: Բազմամարդ, ներքին քաղաքների բնակիչներն ապրում են ավելի երկար, ավելի առողջ և երջանիկ, քան արվարձանների բնակիչները: Մեծ քաղաքները էկոլոգիապես արդյունավետ են և ապահովում են մոլորակի գիտական և մշակութային ռեսուրսների հասանելիություն: Տիպիկ մեծ քաղաքն ունի մոտ 500.000 բնակիչ, որը գտնվում է ևս 1 միլիոնանոց մետրոպոլիայի տարածքում և առաջարկում է ծառայություններ և ռեսուրսներ տարածաշրջանի համար (6000-ից մինչև 10000 կմ^2), որոնք համապատասխանում են այս տարածքի պահանջներին և ներուժին: Փարիզի հետ համեմատելի խտությամբ, շատ վայրեր կարելի է հասնել ոտքով կես ժամում կամ ավտոբուսով 10 րոպեում: Մեծ քաղաքները սովորաբար առաջարկում են հետևյալ հանրային ծառայությունները.

- համալսարան հիվանդանոց
- Էներգիա
- Ջուր
- Բանկ
- հասարակական տրանսպորտ (ավտոբուս, գնացք)
- մարզային դատարան և վարչակազմ
- թատրոն/օպերա
- սպորտային համալիրներ
- հիմնական արդյունաբերություններ
- հարթակ կոոպերատիվ ձեռնարկությունների համար (կոոպերատորիա)
- **metrofoyer** (հանդիպումների համար ընթարձակ տարածք հյուրերի, սոցիալական նախաձեռնություններ և կազմակերպություններ, և բոլոր տեսակի մասնակցային գործընթացների համար)

Մատակարար-հաճախորդ շփումների հաճախություն պահանջող ծառայությունները գտնվում են քաղաքի կենտրոնում: Այս կենտրոնին կից այլ կոոպերատիվ կամ մասնավոր ձեռնարկություններ, ինչպիսիք են գուրման ռեստորանները, կաբարեները, նորաձևության խանութները, շքեղ խանութները, բարերը, կինոթատրոնները, իրավաբանները, կոսմետիկ վիրաբույժները և էլեկտրոնիկայի խանութները կարող են նպաստել կյանքի որակին: Տարածաշրջանում քաղաքն ու քաղաքից դուրսը ինտեգրված են՝ միմյանց կապվելով հասարակական տրանսպորտի միջոցով: Դրանք միմյանց հասանելի են կես ժամվա մեջ՝ ավտոբուսով, գնացքով և տրամվայով կամ մեկ ժամվա մեջ հեծանիվով: Տարածաշրջանները կառավարում են իրենց բնական միջավայրը, ինչպիսիք են գետերը, լճերը, ափերը, անտառները և խավերը (moors): Հազիվ բնակեցված տարածքներում, որտեղ մեծ քաղաքներ չկան, հանրային սպասարկման կենտրոնները կզարգանան համապատասխան աշխարհագրական դիրքում՝ առանց քաղաքային խիտ բնակավայրերի:

Սա մետրոֆոյեի պատկերն է (Յյուրիխի տարածքում). Կենտրոնական պատկերասրահն օգտագործվում է ավելի մեծ հավաքույթների և միջոցառումների համար: Երկու կողմերում կան նաև բիստրոներ/բարեր/ռեստորաններ, որոնք ղեկավարվում են քույր քաղաքների կողմից ամբողջ աշխարհից: Հետևի մասում քաղաքի և նրա թաղերի կամ հաստատությունների ընդունարանի նախասրահն է:

Վերին հարկում իրենց տեղերն ունեն քաղաքացիական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները, ՀԿ-ները. կան հանդիպումների սենյակներ, որոնք կարելի է պատվիրել. կա բաց քաղաքային ուղեղային կենտրոն: Վերևում համայնապատկերային ռեստորանն է (մատչելի գներով), որը ղեկավարվում է քաղաքի կողմից:

4. Տերետորիաներ (գլոմո 4)

Տերետորիաները մոտ 50000 կմ^2 տարածքներ են, որտեղ բնակվում է մոտ 10 միլիոն մարդ: Յուրաքանչյուր տերետորիա ներառում է 5-ից 10 շրջան: Տերետորիաները զուտ ֆունկցիոնալ են. դա նշանակում է, որ նրանք ոչ-էթնիկ են, ապամշակութային և ոչ լեզվական: Անկախ նրանից, թե պատմական սահմանները հարգվում են, թե ոչ դա տեղագրական հարմարության խնդիր է (գետեր, լեռներ և այլն):

Այս չափի և բնակչության տերետորիալ մոդուլը իդեալական է ավելի լայնածավալ ծառայությունների և համակարգերի համար, ինչպիսիք են՝ էներգիան (ցանց և էլեկտրակայաններ, ամբարտակներ), գնացքների ցանցեր, առաջադեմ

Աշխարհի տարածքները կանող են այսպիսի տեսքը ունենալ (սահմանները պատահական են)։

հետազոտական և ուսումնական հաստատություններ, արդարադատություն/ոստիկանություն, բանկեր, անվտանգություն (բանակ), շինարարություն, դեղագործություն և այլ կենսական արդյունաբերություններ։ Նրանք բավականաչափ մեծ են՝ դիմակայություն ստեղծելու, երաշխավորելու արտակարգ իրավիճակներին արձագանքելու և որպես սոցիալական համերաշխության ցանցեր կազմելու համար՝ անհատների, թաղամասերի և այլ մոդուլների միջև։ Որպես ինքնավար մակրոտնտեսական միավորներ՝ նրանք են ղեկավարում իրենց արժույթները, կենտրոնական բանկերը, սահմանները (soiœ-osmotic membranes) և սահմանում են էկոլոգիական և սոցիալական կանոնակարգեր։

Տերետորիայի շատ վայրեր կարելի է հասնել գնացքով երկու ժամվա մեջ, ինչը արդյունավետ է դարձնում ամենօրյա սիներգիան և հաղորդակցությունը։ Դրանց չափը հարմար է թափանցիկ ժողովրդավարական գործընթացների և ինստիտուտների համար։

Լինելով բավական մեծ որոշակի նյութական ինքնավարության համար և ավելի փոքր, քան հին ազգային պետությունները, նրանք ցրում են քաղաքական իշխանության անհավասար բախշումը և հանդիսանում են համագործակցության գլոբալ հավասարակշռված ինստիտուտների հիմքը։

Տերետորիաները կարող են դաշնակցել այլ տերետորիաների հետ երկկողմ կամ բազմակողմ գործընկերություններում և դաշնություններում (օրինակ՝ CERN-ը, մայրցամաքային գնացքների ցանցերը, էլեկտրացանցերը, արդյունաբերական բաղադրիչները, բժշկական արտադրանքները)։

5. Մոլորակ (գլոմո 5)

Մոլորակի 800 տարածքները գլոբալ դաշինք են կազմում որպեսզի կարողանան համագործակցել մոլորակային կարևորության բոլոր հարցերում իրականացնելով մի շարք գործառույթներ, agency ինչպիսիք են.

- Կենսոլորտի մոնիտորինգ և պաշտպանություն
- համագործակցության կազմակերպում և տարածքների միջև վեճերի լուծում
- Սահմանների կարգավորումներ
- համաշխարհային ռեսուրսների բաշխում
- Համաշխարհային բանկ
- Արտակարգ դրություններում օգնության ապահովում (բնական աղետներ, համաճարակներ, սնունդ, դեղամիջոցներ)
- գիտելիքների փոխանակում
- Հետազոտություն
- տիեզերական հետազոտություն
- համաշխարհային դատարան
- անվտանգություն և պատժամիջոցներ
- տեխնիկական բաղադրիչների, ալգորիթմների, մատերիալների արտադրություն և համօգտագործում
- տրանսպորտային համակարգեր
- կապի համակարգեր (հանրային ինտերնետ, գլոբոնետ)
- մշակութային փոխանակում

Քանի որ ներկայիս համաշխարհային ինստիտուտները գտնվում են լեգիտիմության ճգնաժամի մեջ, պետք է նոր կազմակերպություն ստեղծել: Թափանցիկությունը, ժողովրդավարական կառուցվածքները և անդամների հավասար ուժը/չափը կարևոր են:

1600 պատվիրակներից կազմված օրենսդիր/ներկայացուցչական ժողովը (յուրաքանչյուր սեռից և տարածքից երկուական) հավանական է թվում, իսկ գործակալությունները ղեկավարում է 25 անդամից բաղկացած գործադիր խորհուրդը:

Ընդհանուր առմամբ, գլոբալ գործունեությունը կնվազի քանակով և կարևորությամբ, քանի որ փոքր և տեղականները կդառնան ավելի արդյունավետ՝ շնորհիվ թվայնացման, ավտոմատացման և գլոբոների միջոցով գիտելիքների ու տեղեկատվության փոխանակման:

Ամփոփագիր

Տնտեսական ոլորտների, գործառույթների և մոդուլների գլոբալ բաշխումը կարող է այսպիսի տեսք ունենալ (թե՛ ամբողջականությունը, թե՛ առաջնահերթությունները նախատեսված չեն).

Մոդուլ	**Հանրային ծառայություններ**	**Կոոպերատիվ /մասնավոր**	**Տնային տնտեսություն/ սնունդ**
Մոլորակ (գլոմո5)	Վառելիքներ, հանքանյութեր, էներգիա, զենքեր, սերմերի բանկեր, դեղագործական, բժշկական. տեխնոլոգիա, մեքենաներ, տրանսպորտային միջոցներ, ինքնաթիռներ, գլոբուս, հետազոտություն+զարգացում, շտապ օգնություն, բանկ.	Ծրագրային ապահովում, երաժշտություն, ֆիլմ, արվեստ, սպիրտներ, գինի, շքեղ ապրանքներ, բարձր կուտյուր, գրականություն, խաղալիքներ, աղեր, կոսմետիկ ապրանքներ	սուրճ, թեյ, կակաո, ծխախոտ, ընկույզ, լոբի
Տարածք (գլոմո4)	Էներգիա, գնացքներ, նավակներ, դեղամիջոցներ, բժշկական տեխնոլոգիաներ, արդյունաբերություններ, շարժիչներ, հետազոտություններ, բանկ, համալսարաններ, ապակի, թուղթ, ներկեր, կոոպերատիվ, ջուր, շտապ օգնության միջոցներ, լրատվամիջոցներ, բանակ, ոստիկանություն/դատարաններ	Գինի, կրկես, սպիրտ, նրբերշիկեղեն, պանիր, ալգորիթմներ, ժամացույցներ, հագուստ, շոկոլադ, լուցկի, դանակներ, համեմունքներ, հեծանիվներ, սուրճի մեքենաներ, երաժշտություն, օպերա, մեծ հյուրանոցներ	Աղ, յուղեր, մուրաբաներ, գարեջուր, գինի, շաքարավազ, սերմեր, ագրոկենտրոններ
Տարածաշրջան/մեծ քաղաք (գլոմո3)	Էներգիա, ջուր, հասարակական տրանսպորտ, փողոցներ, հիվանդանոց, թատրոն, շինանյութ, թեթև արդյունաբերություն, բանկ, տեքստիլ, թանգարաններ, կրթություն, մարզադաշտեր, ոստիկանություն/դատարան, սպորտային օբյեկտներ, կոոպերատիվ	Նորաձևության դիզայներներ, ռեստորաններ, կինոթատրոններ, բարեր, կաբարեներ, թատրոններ, պատկերասրահներ, սիգարներ, կոշիկներ, պայուսակներ, պատառաքաղներ, կերամիկա, կահույք, վարսահարդարներ, հյուրանոցներ, կոսմետիկ արտադրանք	Ագրոկենտրոններ, կաթնամթերք, ձուկ, նրբերշիկեղեն, մեղր, մանրաթել, շոկոլադ
Համայնք/փոքր քաղաք (գլոմո2)	Էներգիա, ջուր, հասարակական տրանսպորտ, տարրական և ավագ դպրոց, արհեստագործական ուսումնարան, մանկապարտեզ, առողջապահական կենտրոն, ABC, ոստիկանություն,	Հագուստ, գլխարկներ, աքսեսուարներ, ռեստորաններ, բարեր, կինոթատրոններ, համակարգիչներ,	Գլոբոնեքս (արդար առևտրի շուկա), գարեջուր, գինի, բանջարանոցներ, խոտաբույսեր, հատապտուղներ,

	կոոպերատիվ, ստեղծողներ, գերեզմանոց, գրադարաններ,	իրավաբաններ, ոսկերիչներ, կահույք, գրքեր, վարսավիրանոցներ, փոքր հյուրանոցներ	հավ, ծաղիկներ, խոզեր, մեղուներ
Թաղամաս (գլոմո1)		Սեմինարներ, բարեր, յոգա	Սննդի վերամշակում, միկրոկենտրոն, բնակարան, լվացք, կահույք, գործիքներ, վերանորոգում, շենքերի սպասարկում, պարզ խնամք, ինտրանետ, գրադարան

Հաստատություններ

Յուրաքանչյուր մոդուլի առաջարկվող վարչական հաստատությունները ներկայացված են այս աղյուսակում.

Մոդուլ	**օրենսդրական**	**գործադիր**	**ուղղակի ժողովրդավարական իրավունքներ**
թաղամաս	գլխավոր ասամբլեա	խորհուրդ (7 հոգի)	ընդհանուր ժողովներ հրավիրելու իրավունք
թաղ/փոքր քաղաք	մեծ խորհուրդ (100)	փոքր խորհուրդ (7)	առաջարկ/հանրաքվե
շրջան/մեծ քաղաք	մեծ խորհուրդ (100)	փոքր խորհուրդ (7)	առաջարկ/հանրաքվե
տարածք	մեծ խորհուրդ (400)	փոքր խորհուրդ (11)	առաջարկ/հանրաքվե
մոլորակ	մեծ խորհուրդ (1600)	փոքր խորհուրդ (25)	-

Այս ինստիտուտները ներկայացնում են ավանդական և կայացած համախումբ, որի մեջ մտնում են ժողովրդավարական խորհուրդներ, ներկայացուցչական մարմիներ և համաժողովրդական գործիքներ։ Դրանք հիմնված են հիմնարար ժողովրդական իրավունքների վրա, ինչպիսին են քվեարկության իրավունքը, թափանցիկությունը, հավաքների և արտահայտման ազատությունը։ Համաժողովրդական գործիքները չպետք է օգտագործվեն տարածաշրջաններից փոքր մոդուլներում։

Վերափոխում և ֆինանսներ

Առաջարկը իրագործելու համար միջոցները և ռեսուսրները հասանելի են մոլորակում։ Համաշխարհային Հավասարության որոշակի մակարդակ է անհրաժեշտ, որպեսզի մոդուլների մեջ վստահելի համագործակցությունը ստացվի։

Մինչդեռ հին արդյունաբերական հասարակությունները, հիմնականում մոլորակի հյուսիսում հաճախ ցուցադրում են հիպերտրոֆիկ ենթակառուցվածք-ներ, հարավում առաջնային սարքավորումներ բացակայում են: Հետևաբար, անցումային ժամանակաշրջանի համար անհրաժեշտ է համաշխարհային ներդրումների վերաուղղորդում դեպի գլոբալ հարավ:

Եթե ենթադրենք, որ գոյություն ունեցող կառույցների վերածումը թաղային համայնքների (glomo1) արժե 5 միլիոն դոլար յուրաքանչյուրը, ապա մեզ անհրաժեշտ կլինի 80 տրիլիոն դոլար ընդհանուր ներդրում: Սա համապատաս-խանում է տարեկան համաշխարհային ՀՆԱ-ին։ Նույնիսկ մի քանի տարիների ընթացքում տարածելու դեպքում նման ծախսերը (= նյութական ռեսուրսների մոբիլիզացիա) կենսունակ չեն թվում:

Քանի որ հարուստ երկրներում ֆունկցիոնալ թաղամասերի ստեղծումը հեշտությամբ կարելի է ֆինանսավորել սովորական ներդրումային ֆոնդի շրջանակներում, մեզ անհրաժեշտ կլինեն միայն լրացուցիչ միջոցներ (այսինքն՝ նրանց տրամադրած ռեսուրսները) ամենաաղքատ 30%-ի, 2,5 միլիարդ մարդու կամ 27 տրիլիոն դոլարի համար: Տարածված 20 տարվա ընթացքում սա նշանա-կում է տարեկան 1,35 տրիլիոն, ինչը իրագործելի է թվում:

- 1972 թվականին հարուստ երկրները համաձայնեցին իրենց ՀՆԱ-ի 0,7%-ը հատկացնել զարգացմանը, ինչը նրանք այդպես էլ չարեցին: Համաշխարհային ՀՆԱ-ի 0,7%-ը կազմում է 560 մլրդ դոլար։
- 2016 թվականին ռազմական ուժերի համար համաշխարհային ծախսերը կազմել են 1,686 տրլն դոլար։
- Իրաքի պատերազմն արժեցել է 3 տրիլիոն դոլար.
- 2015 թվականին զարգացման օգնությունը կազմել է 131,59 միլիարդ դոլար։
- Համաշխարհային բանկի գնահատականներով՝ տրանսֆերտները կազմել են 585,1 մլրդ դոլար 2016-ին, որից 442 միլիարդը ուղղվել է զարգացող երկրներին։
- 2006 թվականին զուտ վերադարձը մոլորակային հարավից դեպի հարավ հյուսիսը կազմում էր 658 մլրդ դոլար։

- Համաշխարհային Տոբին հարկը կկազմի 0,01% ֆինանսական գործարքների վրա եկամտաբերությունը մոտ 125 մլրդ դոլար է։
- Առնվազն 18,5 տրիլիոն դոլար կուտակված է հարուստ անհատների կողմից, տարեկան ավելի քան 156 միլիարդ դոլարի հարկային վնաս աշխարհով մեկ։
- Ներկայումս 20 երկրներում ապրում է ավելի քան 2000 միլիարդատեր։ Տարեկան հարստության հարկ սահմանելու դեպքում՝ նրանց զուտ արժեքի ընդամենը 1,5%-ով ամեն տարի կհավաքի 74 միլիարդ դոլար։

Այն փաստը, որ մենք՝ 99 տոկոսը, տիրապետում ենք գլոբալ ակտիվների միայն կեսին, կարող է սկանդալային թվալ, բայց դա կարող է նաև դրական ընկալվել. քանի որ մենք ունենք ակտիվների կեսը, ժամանակն է, որ մենք ինչ-որ օգտակար բան անենք դրանցով։ Մենք կարիք չունենք օտարելու կամ հարկելու միլիարդա-տերերին, որպեսզի ֆինանսավորենք մեր փոխակերպման ծրագիրը։ 99%-ի մի մասն իրականում ստանում է արժանապատիվ աշխատավարձ և կարող է իրեն թույլ տալ նպաստել ֆինանսավորմանը։

Օրինակ՝ վերցրեք Շվեյցարիան. 1,35 տրիլիոնը համապատասխանում է 9,045 միլիարդի (ֆրանկ կամ դոլար), համամասնորեն այն 0,67%-ին, որ Շվեյցարիան ներդրում է համաշխարհային ՀՆԱ-ում։ Շվեյցարացի բանվորները վաստակում են 400 մլրդ. տարեկան կտրվածքով դա կկազմի 2,26% կամ 142 ֆրանկ միջին ամսական 6300 ֆրանկ աշխատավարձից։ Աշխարհը փրկելու համար շատ բան չէ, իրականում։

Առաջարկը կյանքի կոչելու նախաձեռնությունները կարող են սկսվել միաժամանակ բոլոր մակարդակներում/մոդուլներում։

Որոշ օգտակար գրքեր

- Boudet, Dominique (Ed.), New Housing In Zurich, Typologies for a Changing Society, Park Books, 2017
- De Angelis, Massimo, Omnia Sunt Communia, Zed-Books, 2017
- Dolan, Paul, Happiness by Design, 2017
- Helfrich, Silke (Hg.), Die Welt der Commons, transcript Verlag, 2017
- Jackson, Tim, Prosperity Without Growth, 2009/2017
- Kahneman, Daniel, Thinking, Fast and Slow, 2011
- Largo, Remo, Das passende Leben, 2017
- Layard, Richard, Happiness: Lessons From A New Science, Penguin, 2011
- P.M. «The Power of Neighborhood» and the Commons, Autonomedia, 2014
- Nelson, Anitra; Schneider, François, Housing for Degrowth, 2018
- Neustart Schweiz, Nach Hause kommen, 2016
- Raworth, Kate, Doughnut Economics, Seven Ways to Think Like a 21st-Century Economist, 2017
- Rosling, Hans, et.al., Factfulness, 2017
- Streeck, Wolfgang, How Will Capitalism End? Verso, 2016
- Tiddens, Harris C.M., Wurzeln für die lebende Stadt, 2014
- Wilkinson Richard G. and Kate Pickett, The Spirit Level: Why More
- Equal Societies Almost Always Do Better, 2009
- Widmer, Hans (Ed.), Die Andere Stadt, Paranoia City, 2017